№ 29 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 6 ՕԳՈՍՏՈՍԻ 1894 № 29

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղական ազգաբնակութեան անբարոյականացումը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Հնդկաստանից. Արտաքին լուրեր.—Բանասիրական. Ահա թէ ինչպիսի կրօնուսոյցներ ունինք.—Յայտարարութիւններ:

## ԳԻՒՂԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆԱՑՈՒՄԸ

—

Գիւղական կեանքի ուշադրութեան արժանի կէտերից մէկն էլ այն ազդեցութիւնն է որ մերձակայ քաղաքները գործում են նոցա կենցաղի և բարոյականութեան վերայ: Այդ ազդեցութիւնը դժբաղդաբար շատ հեռու է օգտակար լինելուց: Թէհրանի պարագայում դա կատարելապէս անբարոյականացուցիչ է:

Ընթերցողին յայտնի է որ Թէհրանի և Սպահանի շրջակայքում, մի քանի օր հեռաւորութեամբ, կան բազմաթիւ հայ գիւղեր, և ինչպէս ուրիշ անգամներ ևս նկատել ենք, պարսկահայ ազգաբնակութեան խիստ ստուար մասը այդ գիւղերի բնակիչներն են կազմում:

Այդ գիւղերի մասին չէ կարելի ասել թէ նոցա բնակիչները թշուառութեան մէջ են գտնւում: Շրջապատուած լինելով համեմատաբար յաջող հանգամանքներից և օժանդակուած ճոխ բնութեան կողմից՝ նոցա մնում է միայն աշխատել բարեկեցիկ դրութեան հասնելու համար: Բայց ոչ. քաղաքը իւր հրապոյրով, աւելի մեծ վարձի յոյսով նորանց քարշում է, և ահա ամեն մի ընտանիքի մէջ որ մէկ երկու տղամարդից աւելի կայ, տղամարդները թողնում հեռանում են դէպի քաղաքները, այնտեղ մշակութեամբ և գլխաւորապէս ծառայութեամբ զբաղուելու առաջին տարիներում:

Գիւղացին հասնում է Թէհրան, մտնում է մի ընտանիքի մէջ որպէս ծառայ. ձախլիկ և անընդունակ ինչպէս որ մի գիւղացի լինում է քաղաք մտնելիս, նա թէև ծառայում է, բայց առանց հաճութեան, չը վայելելով՝ նաև դժուարապահանջ քաղաքացու կողմից ոչ մի համակրութիւն: Եւ ահա սովորաբար բարի, յօժարակամ, պարզ և համակրելի գիւղացուց դուրս է գալիս մի խորամանկ, մարդատեաց, գող, անհաւատարիմ ծառայ. մի քանի ամսից յետոյ չը կարողանալով մնալ նոյն ընտանիքի մէջ իբրև ծառայ, դուրս է գալիս այնտեղից և մտնում է մի այլ տեղ: Այնպէս տրնից տուն հինգ վեց տեղ փոխելուց յետոյ՝ նա դուրս է գալիս բոլորովին կերպարանափոխուած իւր գիւղական համակրելի բնաւորութիւնից: Այս մի քանի տարիները տաժանելի ծառայութիւնը, խիստ և ծաղրական վարմունքը քաղաքացիների կողմից, ուր գործածած միջոցները փող վաստակելու համար կազմում են նորա կեանքի վարժարանը: Դուրս գալով այս վարժարանից մի 20—30 թուման փողով՝ նա հիմնում է մի գինեվաճառանոց, և շուտով բաքոսի երկրպագուները լցնում են նորա քսակը երազած ոսկիներով, և նորա հոգին՝ ստորնութիւններով:

Եւ այսպէս Թէհրանը լցուած է օղեվաճառ գիւղացիներով, և մինչ քաղաքացի հայերից ջանք է լինում քիչ քիչ բառնալ այդ անպատուէչ արհեստը, միւս կողմից պատրաստւում է գինեվաճառների շատ աւելի ստուար մի խումբ:

Մի քանիսի աջողութիւնը հրապուրում է միւսներին, և ահա գիւղացու իդէալը դառնում է քաղաքի մէջ գինեվաճառ դառնալ: Խումբ խումբ գաղթա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՀԱ ԹԷ ԻՆՉՊԻՍԻ ԿՐՕՆՈՒՍՈՅՑՆԵՐ ՈՒՆԻՆՔ

(Պատահած դէպքեր)

—

„Յիշեցէք, որ Աստուածային պատկեր է երեխայի հոգին. երեխան կոկոնի մէջ ծածկուած մի ծաղիկ է, որ մի որոշ ժամանակի ընթացքում պէտք է բացուէ եւ զարգանայ... ուսուցիչը նրան զարգացնելու օժանդակիչ գործիքն է...“:

Հ. Պեստալոցցի.

I.

Առաւօտ է:

Թիֆլիս քաղաքի փողոցներից մէկում գտնուած դպրոցի բակը լի է աշակերտներով եւ աշակերտուհիներով: Սա այն երկսեռ դպրոցն է ուր կրօնուսոյց քահանան (որ իւր ուսումը ստացել է գիւղական մի տիրացուից որի մօտ եւ աւարտել է) լիակատար իրաւունք ունի ամեն բան անելու, նոյն իսկ ուսումնարանը քանդելու կամ շինելու, դասերին յաճախելու կամ չը յաճախելու: Դրա պատճառըն այն է, որ տղայոց դպրոցի աւագ վարժուհին կրօնուսոյց քահանայի խնամին է, բացի դրանից նոյն կրօնուսոյցը եւ հոգաբարձութեան նախագահ է: Իսկ օրիորդաց ուսումնարանը կառավարում է ուրիշ աւագ վարժուհի:

Զանգահարութիւնից յետոյ աշակերտուհիները եւ աշակերտները հաւաքւում են իրանց դասարաններում: Օրիորդաց ուսումնարանում խաղաղութիւն է ընկնում, դասատուութիւնը սկսւում է, իսկ տղայոց դպրոցից լսւում է սարսափելի աղմուկ եւ թխթխկոց: Աւագ վարժուհին դեռ չէ եկել, տանը իւր նորածին երեխային ծիծ է տալիս:

Տղայոց դպրոցում երկու բաժանմունք կայ, առաջին բաժանմունքում աւագ վարժուհու դասն է (ռուսերէն), իսկ երկրորդ բաժանմունքում իւր խընամի կրօնուսոյցի դասն է, որ նոյնպէս չէ եկել, որովհետեւ նախընթաց գիշերը հարսանիքում թամադայ է եղել ու յոգնածութիւնից չէ կարողացել առաւօտեան վաղ վեր կենալ:

Աշակերտների այդ խբարանցումը եւ դոդդոռոցը այն աստիճանի է հասնում եւ այնքան է շարունակւում, որ դպրոցի հարեւանը, որի տանը հիւանդ կայ, բարկացած դուրս է գալիս եւ հայհոյանքներ թափում աշակերտների ու նրանց ուսուցիչների վերայ:

Այսպէս անցնում է երեք քառորդ ժամի չափ, վերջապէս գալիս է աւագ վարժուհին. աշակերտները պատուհանից նկատում են իրանց աւագ վարժուհուն. դրոհ տալով եւ միմիանց գլխին հարուածելով դուրս են թափւում բակը եւ աղաղակում:

—Տիկին, բարեւ ձեզ, բարեւ ձեզ...

—Բարի առաւօտ... բացականչում է աւագ վարժուհին եւ դժուարութեամբ կարողանում է երես առած աշակերտներին դասատուն ներս տանել ու հանդարտեցնել նրանց:

Դասը սկսւում է: փոքր ինչ ժամանակ խաղաղութիւն է տիրապետում տղայոց դպրոցում:

կանները. թողնելով իւրեանց երկրագործութիւնը, վխտում են քաղաքի փողոցներում և շրջապատուած իւրեանց արդէն փորձառու դարձած հայրենակիցներով՝ անցնում են մի և նոյն բովից։ Գիւղացու բարոյականը այնքան ստորանում է որ այժմ մենք լսում ենք մինչև անգամ ոճրագործութիւններ և գողութիւններ նոցա ձեռքով։

Եւ ինչ էք կարծում, մեր քահանաները գոնէ մի անգամ իւրեանց բերանը կը բանան գիւղացիներին յետ կանգնեցնելու համար այս գահավէժ զառիվայրի վերայ։ —Քաւ լիցի։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

24 յուլիսի 1894

Ակամայից գալիս ենք „Շաւիղի“ մէջ արձանագրելու մի տգեղ երևոյթ, հակառակորդին ցած տապալելու համար գործադրած մի ստոր միջոց, որ վերջին ժամանակներս Դավրէժում սովորական է դարձել։ Մէկը, հակառակ շատերի ցանկութեան՝ տեսչական պաշտօն է յանձն առել, մի երիտասարդ՝ հրաւիրել է հասարակութեան ուշադրութիւնը այս ինչ „ուստայի“ որկորը մտած ազգային գումարի վերայ, մի թղթակից քննադատում է „գործչի“ դիմակով ասպարէզ եկողի անցեալը—միւս օրը սկսում է լօնգոբարդների մի կատաղի արշաւանք—ոչ ասպետական վեհանձն դիմադրութիւն և ոչ ազնիւ վրէժխնդրութիւն, այլ փոքրոգի տմարդութիւն և զզուելի ստոր թութիւն...։ Տեսնում էք այս ինչ և այն ինչ փողոցների պատերին կպցրած զանազան թղթեր, որոնք պարունակում են ամենաստոր հայհոյանքներ այս ինչ կամ այն ինչ անձնաւորութեան հասցէին, և որ աւելի ցաւալի ն է, այդ անբարեխիղճ պասքվիլների տակն ստորագրած է լինում „Դավրէժի հասարակութիւն“ կամ “Դավրէժի երիտասարդութիւն“ բառերը։ Մարդ կարդալով այդ զզուելի գրքուածքների տակը եղած ստորագրութիւնը՝ մնում է շուարած, մթթէ մի հասարակութիւն այնքան ընկած դրութեան մէջ է, բարոյական այնքան ստոր աստիճանի վերայ կանգնած՝ որ իրան թոյլ է տալիս անհատներ վայր ձգելու համար այդպիսի ամօթալի միջոցների դիմել։ Հետաքրքրուելով, տեսնում էք, որ հասարակութիւնը անգիտակ է այդ բանին, հետևապէս և այդ գրուածքների ստորագրութիւնները կեղծ են և ստոր հակառակորդի սատանայական մեքենայութիւնները։ Սակայն, այդ հասարակութիւնը դարձեալ որոշ չափով ընկած է մնում մեր աչքում, որովհետև նա, այդ հասարակութիւնը, եթէ չի ուզում այդ անպատուաբեր թղթերի մէջը դնել իւր անունը, պէտք է հետամտի և գտնի ու չարաչար պատժի այն զզուելի սրաբածներին, որոնք յանդգնում են իրանց ստոր արարքները հասարակութեան անունով վարագուրել, իրանց տմարդի վրէժխնդրութիւնը՝ հասարակութեան վերագրել։ Դա նշանակում է հայհոյել հասարակութեան, դա նշանակում է ձրգտել իրանց կեղծ դիմակը ողջ հասարակութեան երեսին դնելու, և պատուապաշտ հանրակութիւնը թոյլ չը պիտի տայ նրանց այդ անել...։

Բայց... բայց աւելի ցաւալին այն է այդ անողները ոչ թէ փողոցային սրիկաներն են, այլ հասարակութեան, կրթութեան անունով գոռում—գոչումով օդ թնդացնողները, ընթերցասիրութիւն ձայնող հայկատակները և լոյս—գիտութիւն գոռացող բախտախնդիրները. այսինքն՝ ինտելիգենցիայի մրուրը, ուսուցչական կոչմանը ամօթ և նախատինք բերող մի քանի ուսուցիչ անունը կրողներ, և Դավրէժի երիտասարդութեան պատիւը արատաւորող նոր սերնդի ներկայացուցիչները։ Ահա թէ բանն ինչումն է։

Այստեղ կան մի քանի „ուսուցիչ“ անունը գօռով կրող երիտասարդներ, որոնք ամեն տեսակ միջոցների դիմելով, երբ տեսել են չեն կարողանում գլուխ պահել—հետևել են իրանց „բարի հայրերի“ օրինակին, այն է՝ մտնել ազգային գործերի մէջ և իրանք էլ նրանց նման հասարակութեան փողով իրանց որկորը լցնել։ Բայց Լիլաւայի հոգաբարձութիւնը՝ հակառակ նրանց թափած ամեն տեսակ ճիգերի՝ վարձում է տեսուչ պ. Գաբրիէլ Պապեանին, որը Ռուսաստանում կրթուած մի երիտասարդ է։ Ուսուցիչների մրուրը փրփրում, կատաղում են, տեսնելով իրանց կառուցած օդային բոլոր ամրոցները տակնուվրայ եղած։

Եւ ահա մի յայտարարութիւն է փակցուած պատերին, որով հայհոյում են այն խեղճ երիտասարդին ամեն տեսակ լուտանքներ թափելով, մինչդեռ նա ընդամենը մէկ շաբաթ է քաղաքումս եղել և ոչոք չէ ճանաչում դեռ նորան։

„Շաւղի“ մէջ լոյս է տեսնում մի յօդուած, որ ազգային „Տուզերի“ պնչին զարկում է։ Տուզերը կարծում են թէ այդ յօդուածագիրը ուսուցիչ Ռ. Մովսիսեանն է և հաւաքելով իրանց փեսաներին-խնամիներին՝ վրէժը լուծելու միջոցներ են մտածում։ Որքան ևս առաւել կատաղում են նրանք, երբ լսում են որ սրբազան առաջնորդը վճռել է նոյն պ. Ռ. Մովսիսեանին քահանայ ձեռնադրել։ Եւ ահա այսօր պատերին կպցրած էր մի զզուելի յայտարարութիւն, որ անպատկառ կերպով ուղղուած էր սրբազանի հասցէին՝ „Էլ առաջնորդ“ անվայել վերադիրով, որով սպառնում են սրբազանին հեռացնել Մովսիսեանին եկեղեցուց, եթէ ոչ իրանք աւելի բարձր տեղ կը դիմեն (մատնութիւն) որ նա

---

Աւագ վարժուհին բաց է անում առաջին եւ երկրորդ բաժանմունքի մէջ տեղը գտնուած դուռը, որ կարողանայ երկրորդ բաժանմունքի աշակերտներին էլ ուշադրութիւն դարձնել:

—Այսօր կրօն չեմ սովորել, երէկ շատ կարդացի. բայց ոչինչ չը հասկացայ, անգիր էլ չը կարողացայ անել այս շարականը, տրտնջում է երկրորդ բաժանմունքի մի յառաջադէմ աշակերտ:

—Ոչինչ այսօր տէր հայրը չի դայ, պատասխանում է նրան իւր ընկերը:

Աշակերտների մէջ սովորութիւն էր դարձել, եթէ մէկը հարցնէր. „հիմա ինչ դաս ունինք“, միւսը կը պատասխանէր „կրօն“ եւ վերան էլ կաւելացնէր. „Տէր հայրը չի դայ“:

Անցնում է փոքր ինչ ժամանակ, դասը վերջանալու վերայ է: Գալիս է կրօնուսոյց քահանան աչքերը ուռած.

—Աղօթելէք. հարցնում է կրօնուսոյցը:

—Այո աղօթել ենք, այո աղօթել ենք... վերայ են տալիս բոլոր աշակերտները միասին:

—Ուրեմն նստեցէք տեղներդ:

—Տէր հայր, կարծում էի թէ չէք գալ, կրօնի դասը չեմ սովորել, ասում է վերոյիշեալ յառաջադէմ աշակերտը:

—Ինչու չես սովորել, հարցնում է կրօնուսոյցը:

—Կարդացի, կարդացի, բայց ոչինչ չը հասկացայ, բերանացի էլ չը կարողացայ անել:

—Ինչ հարկաւոր է հասկանալ, գրաբար աղօթքները առանց թարգմանելու եւ առանց հասկանալու պէտք է անգիր անել: Եթէ դուք գրաբար աղօթքները աշխարհաբար թարգմանէք իրանց ղորութիւնը կը կորցնեն: Կաթողիկոսը արգիլում է, որ գրաբարը աշխարհաբարի թարգմանենք, պատասխանում է կրօնուսոյցը եւ հետն էլ աւելացնում.—վերցրու դասագիրքդ եւ կարդա:

Աշակերտը վերցնում է կրօնի դասագիրքը եւ կարդում է „Հաւատամքը“: Ընթերցանութեան կէսը դեռ չաւարտած, լսում է զանգի ծայնը, աշակերտները առանց սպասելու ուսուցչի հրամանին, ամենքը զուրս են վազում:

Տէր հայրը ջտապով ստորագրում է օրագրական մատեանում, իբրեւ թէ ամբողջ դաս է պարապել եւ շտապում է գնալ արքունական դպրոց. ուր նոյնպէս կրօն է աւանդում:

II.

Ժամն տասնմէկ եւ կէսն է: Մեծ դասամիջոցը վերջացել է, սկսուել է չորրորդ դասը: Օրիորդաց ուսումնարանի երրորդ բաժանմունքում կրօնի դաս կայ: Դարնանային գեղեցիկ օրերից մէկն է, արեգակը թափանցել է դասարանի պատուհաններից եւ աշակերտուհիներին զուարճացրել: Նրանք այսօր տրամադիր են զբօսնելու. քան թէ կրօնի անհասկանալի անհագին յօդուածները բերանացի ասելու:

Այդ դասին ներկայ է եւ օրիորդաց ուսումնարանի աւագ վարժուհի տիկին Ցայտնեանը, որ արդէն չափել է յիշեալ կրօնուսոյցի գիտութիւնն եւ պարապելու եղանակը:

Տէր հայրը այսօր սրոշեալ ժամանակին է եկել դաս պարապելու:

—Վարդանեան Վասիլոէ, պատմիր դասդ, ա-

մարդասպան է (զրպարտութիւն), և հազար ու մի տեսակ հայհոյանքներից յետոյ, թէ իրանք կը գնան և բողոքական կը դառնան: Յայտարարութեան տակն ստորագրած է „124 լիլաւացիներ“: Նախ՝ սրանից մէկ շաբաթ առաջ, մի խընճոյքում, ուր ներկայ էին ամբողջ լիլաւացիների աչքի ընկնող մասը, իրանք առաջարկեցին սրբազանին միաձայն՝ ձեռնադրել այդ պարոնին քահանայ իրանց եկեղեցւոյ համար: Երկրորդ այսօր մենք առիթ ունեցանք 100 հոգի լիլաւացիների հարցնել այդ յայտարարութեան մասին. բոլորն էլ միաձայն վկայում էին, որ դա փչացած անձնաւորութիւնների գարշելի արարք է...:

Մեզ մնում է ցաւել հասարակութեան վերայ, որ դեռ թոյլ է տալիս այդպիսի ոչ բարոյական արարածներին հասարակական գործերի խառնուիլ և հասարակաց կրթութեան և յառաջադիմութեան նախանձախնդիր համարել իրանց...:

Ֆ.

---

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Դավրէժ 25 յուլիսի 1894

Մեզ շատ տարօրինակ է թւում այն բանը, որ աշխատում են մինչև իսկ ճշմարտութիւնն էլ հերքել. ինչն է դրդում մարդկանց այդ քայլն անելու. տեսնել մածունը սպիտակ է և պնդել թէ սև է, հայի խնդիր է թէ անձի, այդ իրանք գիտեն, բայց այդքանը թող չը մոռանան, որ ճշմարտութիւնը միշտ ճշմարտութիւն է, աշխատել նրան ծածկել՝ դա երեխայութիւն է, և անկարելիութիւն:

Մենք մեր աչքով տեսած ու ականջով լսած՝ հաղորդում ենք թէ Դավրէժու բողոքականաց դպրոցի վարչութիւնը որոշել է այլևս լուսաւորչական ուսուցիչներ չը պահել, յանկարծ մէկը այն կողմից դուրս է գալիս և իբր խընդրին տալի լաւ ծանօթ, ուզում է շոգմոգութեամբ, առանց կարմրելու հաստատել թէ այդ լուրը սխալ է. և տեսէք ինչ կերպով: „Ինչպէս ամեն մի ընթերցուլի, մեզ ևս այս լուրը տարօրինակ թուեց“, (իհարկէ եղելութիւնը տարօրինակ է) ասելն („Շաւիղ“ № 25): Թող մեր պ. հերքիչը իւր յիշողութիւնը մի քիչ սրէ, որովհետև չորս տարի չէ այդ կայացած ընդհանուր ժողովը, այլ երկու և մեզ համար նշանակութիւն չունի առաջարկողների ասորի կամ հայ լինելը, մեր խօսքը որոշումը ընդունուելուն վերայ է և եթէ չընդունուեց այդ որոշումը ինչու իսկոյն և եթ արտաքսուեցան երկու լուսաւորչական ուսուցիչները, որոնցից մէկը լաւ բարոյականի տէր էր ինչպէս և իրանք էլ խոստովանչում են և նորանց պաշտօնը ստանձնեցին իրանք Միսիոնարները մի բողոքական ուսուցչի հետ. և հէնց այս տարի ուսուցչական խումբը կազմակերպելու համար ահագին դժուարութեամբ, հազիւ հազ կարողացան գտնել երկու բողոքական ուսուցիչներ և 3—4 ուսուցչի պաշտօնն էլ, որոնց կարօտութիւնը անհրաժեշտ է, ինչու ստիպուած դարձեալ իրանք պէտք է կատարեն: Մինթէ չը կարողացան գտնել „լաւ բարոյականի տէր, ճշմարիտ դաստիարակ“ լուսաւորչական ուսուցիչներ: Ի զուր է ճգնում մեր պ. հերքիչը ծածկել ճշմարտութիւնը, որոշումը յառաջ է տարուում առանց մի կէտն անգամ փոփոխուելու. նա իւր այդ հերքումով վիրաւորում է նոյնիսկ տեսչին և ամբողջ վարչութեանը, որոնք իրանց բերանով ճշդութեամբ խոստովանուում են իրանց արած որոշումը: Վերջացնում ենք մեր խօսքերը այս ասելով, որ մենք պատրաստ ենք այս անգամ պաշտօնապէս հրատարակել տալու այդ որոշումը, եթէ հարկը պահանջէ:

Ե.

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հաստատ աղբիւրներից քաղում ենք, որ Վեհափառ Հայրիկը մի օրհնութեան կոնդակ է ուղարկել առ Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց առաջնորդ՝ Եսայի եպիսկոպոսն:

—

Լսում ենք որ Թէհրանում նոր հաստատուած լուցկիի գործարանը որ ամբողջ Պարսկաստանում առաջին գործարանն էր և յատուկ մենաշնորհն էր մէկ ռուսական ընկերութեան, այս օրեր վերջնականապէս հաւաքեց իւր գործերը:

—

Դավրէժից մեզ գրում են, որ անլայտ աւազակներ գիշերով մտել են Ս. Աբգումանեանց ֆիրմայի տունը՝ և կտրի վերայ սպաննել, պ. Սմբատ Աբգումանեանցին, եղբայրները բողոքել են Դավրէժ և Թէհրան հեռագրով: Այս դէպքից 20 օր առաջ՝ Ս. Աբգումանեան տան հետ պատահել է մի ուրիշ դէպք: Շահթախտի վրայով գալիս էր Սալմաստ Բ. Աբգումանեանի որդի Ա. Աբգումանեանը, որ գնացել էր Թիֆլիս բերելու իւր որդիքը, որոնք սովորում էին Թիֆլիսում: Գալիս էր պ. Աբգումանեանի հետ՝ սպանուած պ. Սմբատի եղբօր որդին էլ, որը նոյնպէս սովորում էր Թիֆլիսում: Պարոն Սմբատը ուղարկած է եղել՝ փոր եղբօր որդու համար մարդիկ և ձի որ բերեն. պ. Ա. Աբգումանեանի համար էլ իւր տնից՝ ուղարկուած է եղել ձիեր և ծառաներ: Գնացողները դէպի Շահթախտ եղել են ութ հոգի՝ որոնցից երեքն եղել են հայ, իսկ հինգը թուրք ծառաներ և ջորեպաններ: Խոյի և Ենգի գիւղերի միջավայրում, տասը ու չորս զինուած և դիմակաւորուած ձիաւորներ, յարձակում են սրանց վերայ, թալանում և սպաննում հայերից մէկին, որը յայտնի է մեզ մօտ Մովսէս անունով, տանելով իրանց հետ 1000թումանի ապրշումեղէն ապրանք, 2000 թու-

---

սում է կրօնաւորը մի հատակաւոր եւ յառաջադէմ աշակերտուհու:

Աշակերտուհին սկսում է այն օրուայ դասը՝ „Սահակ պարթեւի“ պատմութիւնը պատմել եւ վերջացնելուց յետոյ կրօնաւորը, որ իւր աչքերը գրքից չէր հեռացնում, նիստոգութիւն է անում աշակերտուհուն:

—Դու շատ բան բաց թողիր, ու գրքի համեմատ էլ չը պատմեցիր, հազար անգամ ասել եմ, որ սա կրօն է, կրօն, բառացի անգիր պիտի ասէք, եթէ մի խօսք գրքից դուրս բան ասեցիք՝ այդ կը նշանակէ, որ դուք անհաւատներ էք:

—Այս Յարութիւնեան Ատղիկ, պատմիր:

—Այս աշակերտուհին բառացի անգիր է պատմում „Սահակ պարթեւի“ մասին, գրեթէ գրքից ոչինչ բաց չը թողնելով:

—Այո, այդպէս, շատ ապրես, քեզ 5-եմ նշանակում:

—Օրիորդ, ասա խնդրեմ, ով էր Սահակ պարթեւը հարցնում է նոյն աշակերտուհուն աւագ վարժուհին:

նարհեցնում, իսկ միւս աշակերտուհիներից մէկը մատ է բարձրացնում, իբրեւ նշան, որ ինքը գիտէ: Աւագ վարժուհին դրան էլ նոյն հարցն է տալիս:

—Սահակը քահանայ էր, պատասխանում է աշակերտուհին:

—Այդպիսի բաներ ինչ հարկաւոր են, ես չեմ սովորեցրել, բաւական է, որ սրանք պնծնաւորութիւնների անուններ եւ գործեր լաւ իմանան, սրբանց խելքը այդչափ չի կտրում, պատասխանում է կրօնաւոր քահանան աւագ վարժուհի տիկին Յայտնեանին:

Աւագ վարժուհին ժպտում է եւ լռում:

—Տէր հայր, ինչ բան է պարթեւ, հարցնում է կրօնաւորին մի հետաքրքիր աշակերտուհի:

—Հին ժամանակ կային մի տեսակ զարմանալի մարդիկ, բացատրում է տէր հայրը. նրանց գլուխը չափից դուրս մեծ էր, ունէին երկու մեծ թեւեր, երկայն ձեռքեր եւ երկայն ոտքեր: Ինչպէս այժմ երկար ձեռքեր ունեցող մարդկանց զոլգօրուկով են ասում, այնպէս էլ այն ժամանակ յիշեալ մարդկանց պարթեւ էին կոչում որ նշանակում է երկու մեծ

Աւագ վարժուհին լսելով այս այլ եւս չի կարողանում իր ծիծաղը զսպել եւ դուրս է գնում դասարանից: Իսկ աշակերտուհիների մէջ բարձրանում է սաստիկ հռհռոց:

Դասը վերջանում է: Աշակերտուհիները դուրս են գալիս բակը խաղալու. նախասենեակում օրիորդաց ուսումնարանի աւագ վարժուհին հանդիպում է կրօնաւոր քահանային եւ ասում:

—Տէր հայր, մինթէ զոլգօրուկով երկար ձեռքեր ունենալու պատճառով են կոչում, զոլգօրուկով մի տիտղոս է կամ մինթէ պարթեւ թեւաւոր մարդ է նշանակում:

—Այո, տիկին, հին ժամանակ թեւաւոր մարդիկ կային, հէնց պարթեւ խօսքն էլ այդ է նշանակում պար նշանակում է զոյգ, թեւ—թեւեր, այսինքն «զոյգ թեւեր ունեցող մարդիկ»: Այս ասելուց յետոյ իսկոյն շտապով հեռանում է տէր հայրը իսկ աւագ վարժուհին բարձրածայն ծիծաղով ներս է մտնում ուսուցչական սենեակը:

(կը շարունակուի)

ման էլ կանխիկ փող, որը տանում էին Շահթախթից փոստը ձգելու։ Ս. Ա-զումանեանցները բողոքել են, թէ Խոյ և թէ Դավրէժ։ Այս օրերս ուղարկուեցան մամուլները Խոյ, Մաքու, Ուրմի, ասում են որ ապրանքի յետքերը գլ-նուած են Ուրմի և Մաքու։ Վերոյիշեալ դէպքերից տաս օր առաջ՝ Դերիկի վանքը գնացող ուխտաւորներից սպանուել են երկու հոգի, Նզրավայի քիւրդ գիւղի և Դերիկի մէջտեղում, կասկածում են Նզրավացի քիւրդերի վերայ, որովհետև վերոյիշեալ քիւրդերը սարսափելի դէմ են վանքի վերաշինութեան և չեն խնայում ոչ մի միջոց արգելքներ լինելու։ Դեռ յիշեալ դէպքի համար ոչ մի տնօրէնութիւն չեղած՝ Դավրէժի գայմագամը Սալմաստից ստացաւ յուլիս 20 թուով այսպիսի մի հեռագիր, որ Դերիկի ուխտաւորները շրջապատուած են երկու հարիւրի չափ Տաճկաստանից եկող քիւրտերով՝ տնօրէնութիւն։ Գայմագամը հրամայել է, որ Սալմաստում ինչքան ձիաւորներ կան ուղարկուին ուխտաւորները պաշտպանելու համար, Դավրէժ եկող սալմաստեցիները պատմում են, որ մինչև կառավարութեան ձիաւորների հասնելը ուխտաւորները ընդհարում են ունեցել քիւրդերի հետ, և սպաննել են նրանցից 4 հոգի, իսկ իրանց կողմից միայն սպանուած է քիւրդ հովիւը, տարել են տաւարի մի մասը։

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ յուլիս 20-ին Դավրէժ հասան երեսուն հինգ հոգի Սալմասի Հաֆթուան գիւղացիները, որոնք եկել են բողոքելու՝ իրանց նոր աղայի դէմ, որը կամեցել է մինչև հիմայ ստացած տուրքի փոխարէն՝ գօրալ անել ամբողջ հողը։ Տասն ու վեց հոգի էլ բանտարկուած են Սալմաստում, որոնց օրը երկու անգամ ծեծում են և հինգ թուման փող առնում։ Յուլիս 27-ին Դավրէժ եկող բոլոր հաֆթուանցիք մտան բաստ թագաժառանգի մօտ։ Իսկ 17-ին Բերդաթաղում մի հայ կին թողել և փախել է, իրանց թուրք ծառայի հետ, ասում են որ ամուսինը շատ ծեծելիս է եղել։

—

Նոյն տեղից մեզ գրում են որ յուլիսի 27-ին նորին բարձր սրբազնութիւնը ստացել է Դերիկի վանքի վաքիլ Սարգսից հետևեալ հեռագիրը, որ Դերիկի վանքի տաւարը թալանեցին և տարան երեքհարիւր քիւրդեր, ինքն էլ պատրաստում է վանքը դատարկել։

—

Հաստատ աղբիւրներց լսում ենք որ, Քէյվանի տէր Սարգիսը նորին բարձր սրբազնութեան հրամանով առ այժմս դադարել է քահանայագործութիւնից։

—

Նիւթերի շատութեան պատճառով բովանդակութեան մէջ յիշուած Հնդկաստանի նամակը չը մտաւ։

„Ղարադաղի գաւառ“ բանասիրականի շարունակութիւնը չորս համարով յետաձգուեցաւ։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Շանխայից յուլիս 25-ին հաղորդում են որ ժապօնացւոց զօրքը, չինական սահմաններում և չինացւոց հաստատուած տեղերում յառաջ են խաղում։ Այս երկու տէրութեանց մէջ պատերազմը անխուսափելի է։

—Լոնդոն յուլիս 27-ին հեռագրում են որ Անգղիոյ արտաքին գործոց նախարարութեան երկրորդը յայտնում է որ համաձայն Անգղիոյ տէրութեան խնդրանաց, գերմանական, ռուսական, ֆրանսական և իտալական կառավարութիւնները հրահանգ են ուղարկել իրանց թոկիօում և Պէքինում ունեցած դեսպաններին, որ օգնեն այդ քաղաքներում եղած անգղիոյ դեսպանների արած ջանքերին որպէս զի խռովութեան և երկպառակութեան պատճառները մէջ տեղից բառնան։

—Յուլիսի 28-ին Եօքօհամայից հեռագրում են թէ որպէս Ժապօնի պաշտօնական լուրերից երևում է, ժապօնական պատերազմական երեք նաւատորմ չինական մարտանաւերի հետ պատերազմի են բռնուել և խորտակել չինական մէկ նաւատորմը որ կրում էր բազմաթիւ զօրքեր. մէջի բոլոր զօրքերը զոհ են գնացել։

—Յուլիսի 29-ին Եօքահամայից հեռագրում են որ չինական զօրքը ամսոյս 27-ին Ասանում ժապօնացիների վերայ յարձակում է արել. բայց այդ պատերազմի մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն։ Ժապօնի կառավարութիւնը իւր ծովային պահեստի զօրքը կոչել է։ Չինացւոց կառավարութեան Ժապօնում ունեցած դեսպանները և պաշտօնեաները, Ժապօնից հեռացել են։

—Փարիզից յուլիս 26-ին հեռագրում են որ ֆրանսական զօրքը Սէնէկալի քահանային սպաննել է, որովհետև նա քարոզում և դրդում է եղել ժողովրդին որ ֆրանսացիներին մի ընդհանուր կոտորած տան, 500 հոգի էլ նորա համախոհներից են սպանուել։ Ֆրանսացիներից 9 հոգի սպանուած և 150 հոգի վիրաւորներ կան որոնցից 6 հոգին պաշտօնեաներ են։

—Յուլիսի 30-ին Եօքօհամայից հեռագրում են որ չինական զօրք փոխադրող մի նաւ, ժապօնական մի մարտանաւից յաղթուել է, 1500 չինացիներ ջրասոյզ են եղել և կորսուել, մի քանի օտարականներ էլ չինացւոց հետ ջրասոյզ և թշնամու կրակին են հանդիպել։

—Լոնդոն օգոստոս 1-ին „Տայմզ“ լրագիրը Պէքինից եկած մի հեռագիր է հրատարակել որոյ մէջ ասում է որ իշխան Լիհունկ-Զանկը յայտարարել է որ եթէ պատերազմի յայտարարութիւն լինի չինական կառավարութիւնը շատ խիստ կերպով պատերազմի կը ձեռնարկէ։

—Օգոստոս 1-ին, Տօկիօից հաղորդում են որ, Ժապօնիոյ կառավարութիւնը պաշտօնապէս Չինացւոց կառավարութեան, պատերազմ յայտարարեց։ Նոյն թուին Լոնդոնից հեռագրում են, որ Անգլիացւոց տէրութիւնը Չին-Ժապօնական սխատերազմում իւր չէզոքութիւնն է յայտարարելու. Վարչ Սալիսբէր բոլոր անգլիական նաւերին հաղորդել եւ յայտարարել է որ չինացւոց եւ ժապոնացւոց տէրութեանց եւ ոչ մէկի համար զօրք եւ պատերազմական մթերքներ չը փոխադրեն, եւ անդղիացւոց փոխ-ծովակալին հրահանգ է տրուել որ իւր բոլոր նաւերը հաւարէ չինական եւ ժապօնական նաւահանգստներում, ի պաշտպանութիւն անգղիոյ շահերի եւ իրաւանց։

—Օգոստոս 3-ին, Շանխայից հեռագրում են որ վաճառականները օգնութեան եւ ձեռնտուութեան անունով պատերազմի համար մեծ գումարներ են հաւաքում Չինաստանում։

—Օգոստոս 3-ին Լոնդոնից հաղորդում են որ գերմանական երեք եւ սպանիական մէկ նաւատորմերի հրամայուել է գնալ Կորէա։

—Փարիզ, Դատաստանական խորհուրդը Կարնօի սպանողին մահուան է դատապարտել։

—Օգոստոս 4-ին Տօկիօից հաղորդում են.այս քաղաքը հասած լուրերին նայելով երեւում է, որ ժապօնացւոց զօրքը յուլիս 29 ին կրկին Եաշանում յարձակում է գործել չինացւոց բանակի եւ պանակ զօրանոցի վերայ։ Չինական պաշտպանուող զօրքը 3000 հոգի էին։ Հինգ ժամ պատերազմից յետոյ Չինացիք յաղթուեցին 500 հոգի կորսնցնելով։ Ժապօնացիք չորս թնդանօթ եւ մեծ քանակութեամբ ռազմամթերք են ձեռք անցրել։ Ժապօնացիներից կորուստ կայ 80 հոգի։

—Պէկին 4 օգոստոսի. Չինացւոց կայսրը մէկ հրովարտակ է հրատարակել որ Կորէան Չինական հպատակութեան ներքոյ է որով եւ իշխան Լիհունկ-Զանկին հրամայում է որ հարկաւոր եղած միջոցները ձեռք առնէ Չինացւոց իրաւունքները եւ շահերը պահպանելու համար։

—Լոնդոն օգոստոս 4-ին հեռագրում են, որ Եաշանում պատահած պատերազմի այստեղ հասած լուրերը հաստատում են որ Ժապօնացիք նահանջել են։

—Յուլիս 28 և 29-ին Եաշանում պատերազմ է տեղի ունեցել, 2000 Ժապօնացիք կորսուել են։ „Տայմզը“ մի հեռագրաւոր է հրատարակել որպէս թէ 20000 չինացիք Մանչուրիի կողմից մտել են Կորէա։

—Օգոստոս 6-ին Շանխայից հեռագրում են, որ Ժապօնի դեսպանը և իւր հետևորդները Ժապօն վերադառնալու ժամանակ Տակօում չինական զինուորները նրանց հայհոյել և նորանց ապրանքները խլելեն։ Իշխան Լիհունկ-Զանկը զօրք է ուղարկել որ այդ խառնակողներին ձերբակալեն։ Նոյնպէս լուր է հասել որ ժապօնացիք Ժապօնում գտնուած չինական դեսպաններին և պաշտօնեաներին հետ շատ վատ վարմունք են ունեցել։ Անգղիացւոց և ռուսաց կառավարութիւնները կատարեալ համաձայնութեան են եկել, որ չինացւոց և ժապօնացւոց մէջ տեղի ունեցած երկպառակութիւնները վերցնեն և Պէտերբուրգի Սէնատում խօսուել է որ եթէ ռուսը և անգլիացին չինացւոց և ժապօնացւոց միջի անհամաձայնութիւնը բառնալու չը յաջողեն, ռուսաց կառավարութիւնը պատրաստ կը լինի չը թողնելու որ ոչէ մի պետութիւն Կորէայի որ և է մի կտորը տիրէ։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ